

«Ընդարձակ բառարան Արաբերեն-Հայերեն». Հրատարակություն  
«Մշակ» Մատենաշարի, Բեյրութ, 1959:

قاموس عربي - ارمني، مطبعة مشاك بيروت، ١٩٥٩

1959 թ. Բեյրութում «Մշակ» հրատարակչությունը լույս է բնծայել «Ընդարձակ բառարան Արաբերեն-Հայերեն» (Կառույթ Արաբի-Արմենի): Որպես աշղպիսին այս բառարանը առաջինն է հայ բառարանագրության պատմության մեջ և օգտակար կարող է լինել առանձնապես արաբական Արեւելքում ապրող հայերի համար:

Մինչև վերջերս էլ արաբերենի բացատրական և երկլեզվյան բառարաններում նյութը դասավորվել է բնային սկզբունքով: Այս ձևով կազմված բառարանները մեծ դժվարություններ են հարուցում բառարանից օգտվողների համար, եթե նկատի ենք ունենում արաբերենի բառակազմական առանձնահատկությունները:

Արաբերենը բառերի սկզբում, մեջուղում և վերջում ածանցական տարրեր մասնիկներ ավելացնելով կազմում է նոր բառեր, որոնք տարբեր իմաստ են արտահայտում. ածանցումը արաբերենի բառապաշարի հարստացման գլխավոր աղբյուրն է: Արաբերեն բառարանում ածանցված որևէ բառ գտնելու և նրա իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է բավականին ծանոթ լինել արաբերեն լեզվին, նրա քերականական ու բառակազմական կառուցվածքին, այլապես հնարավոր չի լինի ցանկացած բառը գտնել բառարանում: Ահա այսպիսի դժվարություններից խուսափելու և բառարանում ցանկացած բառը անմիջապես գտնելու նպատակով գրախոսվող բառարանը կազմվել է այբբենական կարգով: Բառարանի առաջարկում ասված է, որ պետք է «Բառերը ստուգելու համար այբբենական օրենքին հետևել և բառը փնտրել իր սկզբնատառին համաձայն համապատասխան էջին վրա»:

Այբբենական կարգով արաբերեն բառարան կազմելու առաջին փորձը կատարել է գերմանացի արաբագետ Ադոլֆ Վարմունդը, որը 1877 թ. լույս է բնծայում իր կազմած բառարանը<sup>1</sup>: Նույն սկզբունքով արաբերեն-հայերեն բառարան է կազմել և շուտով տպագրության կհանձնի Հայկ. ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորը, բառարան,

որի սկզբունքները արժանացան 1959 թ. մայիսին Հենիգրադում կայացած Սովետական Միության արաբագետների խորհրդակցության հավանությանը:

Անտարակույս, այբբենական կարգով արաբերեն-հայերեն բառարանի լույս բնծայումը առաջադիմական երևույթ է և արժանի խրախուսանքի:

Գրախոսվող բառարանը բաղկացած է 467 էջից և պարունակում է մոտ 30 000 բառ: Բառարանի սկզբում տրված են խմբագրության բացատրություն, ծանոթագրություն և արաբերեն լեզվով մի կարծ ներածական: Հեղինակի կողմից օգտագործված բառարաններ և այլ նյութեր ցույց չեն տրված<sup>2</sup>:

Բառարանը գերծ չէ թերություններից: Այսպես օրինակ, թեև այն կազմված է այբբենական կարգով, սակայն այդ սկզբունքը հետևողականորեն չի պահպանվել: Բերենք մի քանի օրինակներ:

«Ինկիթա» (ընդմիջում, դադարեցում) և انقلا «Ինկիլար» (հեղաշրջում, ուղղվածքի) բառերը, համաձայն այբբենական կանոնի, պետք է, որ իրենց սկզբնատառի էջում լինեն, այսինքն -ի-ով սկսվող բառերի շարքում: Սակայն քանի որ այս երկու գոյականները انكس «կաթա» (կտրել) և انكس «կալար» (շուռ տալ, փոփոխել) արմատ-բառերի ածանցված ձևերն են, այս պատճառով հեղինակը վերոհիշյալ բառերը մտցրել է ոչ թե -ի-ով, այլ -կ-ով սկսող բառերի շարքը (էջ 329): Մի ուրիշ օրինակ. مستشرق «մուարրիխ» (պատմաբան), «մուսթաշրիկ» (արևելագետ), انكس «մուսլիմ» (ուսուցիչ) բառերը մենք չենք գտնում -մ-ով սկսող բառերի էջերում, նրանք դրված են արմատ-բառերի սկզբնատառի համապատասխան էջերում:

Բառարանում չեն նշված գոյականների հոգնակները: Արաբերենում, ինչպես հայտնի է, կան երեւոյնից ավելի հոգնակերու ձևեր, որոնց ճիշտ գործածությունը ձևեր է բերվում վար-

<sup>1</sup> Adolf Warmund, Handwörterbuch der Arabischen Sprache, Giessen, 1877.  
18\*

<sup>2</sup> Բառարանի հեղինակի անունը չի նշված:

ժուլյամբ կամ բառարանների միջոցով, հետևաբար, ինչպես ընդունված է արդի բառարանագրության մեջ, կգալի ձևերի կողքին պետք է տրվեն նաև նրանց հոգնակները:

Վերջին տասնամյակների ընթացքում արաբերենի բառապաշարը հարստացել է քաղաքական և տեխնիկական այնպիսի նորագույն բառերով ու բառակապակցություններով, որոնք չափն գործածություն ունեն արաբական ժամանակակից գրական և խոսակցական լեզվի մեջ: Սակայն պետք է նշել, որ դրանց մի զգալի մասը տեղ չի գտել բառարանում, ինչպես օրինակ՝ «մուհիրը լիսիլմ» (խաղաղասեր), «մուհիրը լիհուրրիյա» (ազատասեր), «թաալուշ սիլմի» (խաղաղ գոյակցություն), «անսարասիլմ» (խաղաղության կողմնակիցներ), «թաաամուն աշշուուր» (ժողովուրդների համերաշխություն) և այլն: Ավելին, այնպիսի գործածական բառեր, ինչպիսիք են «սահաֆի» (ժուռնալիստ), «ռաշրի» (ռեակցիոն, ռեակցիոններ), «սուֆիյաթի» (սովետական), «շուլուխիյա» (կոմունիզմ), «թիլֆազ» (հեռուստացույց), «թիլֆիդիյուն» (հեռուստատեսություն), «թաակա զարրիյա» (ատոմային էներգիա) բացակայում են բառարանում: Որպես ընդարձակ բառարան, քննարկվող բառարանում պետք է որ տրված լինեն բառերի բոլոր իմաստները, բայց դժբախտաբար հանդիպում ենք առանձին թերացումներին:

Ընչ վերաբերում է արաբերեն բառերի հայերեն թարգմանությունը, պիտի ասել, որ այս հարցում ևս կան որոշ անճշտություններ. այսպես օրինակ՝ 1. «դարբաջա» թարգմանված է քալող կառք (էջ 128), պետք է լինի 1. երեխաներին քայլել սովորեցնելու հարստասք. 2. հեծանիվ: 3. «մեղար» խորան, տապան (էջ 178) պետք է լինի 1. այգեխության վայր, 2. գերեզման, 3. աղոթատեղի: 4. «դար սոդ դարը» մթերա-

նոց (էջ 137) պետք է լինի 1. դրամահատանոց, փողերանոց: 5. «մալլահա» աղի վերարերյալ գործ, աշխատանք (էջ 40) պետք է լինի 1. աղահանք, 2. աղաման:

Արաբերենում կան բայեր, որոնք տարբեր նախդիրների հետ տարբեր իմաստ են ստանում, ինչպես, օրինակ՝ 5. «դաա» (կանչել) բայը 6. «իլա» նախդիրով՝ հրավիրել, 7. «լի» նախդիրով՝ ցանկալի, բարեմաղթել, իսկ 8. «ալա» նախդիրով՝ անհիմել է նշանակում: Հետևաբար բառարաններում խոսքի արտահայտության այսպիսի ձևերը ցույց տալու համար, բայից հետո անպայման բոլոր նախդիրները պետք է դնել, որպեսզի ընթերցողը ճիշտ գաղափար կազմի բայի նշանակության մասին: Պետք է ասել, որ ներկա բառարանում բայերի հետ ոչ բոլոր նախդիրներն են դրված: Նույնը կարելի է ասել նաև ձայնանիշների մասին: Տրված են ոչ բոլոր ձայնանիշները, մինչդեռ բառարանը կազմված է արաբերեն լեզուն սովորողների համար, հետևաբար անհրաժեշտ էր տալ բոլոր ձայնանիշները, որպեսզի սովորողը կարողանար արաբերենի ճիշտ արտասանությամբ կարգալ բառերը:

Մեր այս դիտողությունները ամենևին չեն արժեքազրկում բառարանը, որը ինչպես ասացինք, առաջին արաբերեն-հայերեն ընդարձակ բառարանն է և իր հարուստ բառապաշարով զգալի շափով դյուրացնում է արաբերեն լեզվի ուսումնասիրումը, հանդիսանում է օգտակար ձեռնարկ այդ լեզվով հետաքրքրվողների, հատկապես արաբական երկրներում ապրող հայերի համար, միաժամանակ, մասամբ լրացնում է արաբերեն-հայերեն բառարանի այն պակասը, որ զգացվում է հայ բառարանագրության մեջ:

Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ս. ՉՈՒԼՋՅԱՆ

«ДРУЖБА». Статьи, очерки, исследования, письма об армяно-русских связях. Тт. I и II (на армянском языке), Ереван, 1960. Составитель сборника и автор вступительного очерка Ашот Арзуманян.

Сборник «Дружба» состоит из двух книг общим объемом 1300 страниц. Он представляет собою четвертое переработанное издание. Первое издание вышло (на русском языке) в 1956 г. Второе, дополненное издание было выпущено в 1957 г. Оба из-

дания быстро разошлись. Спустя год «Ай-петра́т» выпустил «Дружбу» на армянском языке и переработанном виде, в новой редакции. Настоящее издание существенно отличается от предыдущих прежде всего полнотой материалов. Если в первом из-